ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-2-Ե- 8163

«28» հոկտեմբերի 2026թ.

«ԴԱՎԹՅԱՆ ԴԻԱՆԱ ԱՐԱՐԱՏ» Ա/Ձ-ԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Նոր Նորք Մինսկի 4/34)

«ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ» ԱՁ-ԻՆ
(հասցե՝ ք. Արմավիր, Ավետիսյան 120)

«ՄԱՐԳԱՐԻՏԱ ԳԱԼՍՏՅԱՆ» ԱՁ-ԻՆ
(հասցե՝ ք. Վանաձոր, Աղայան 72/16)

Հարգելի՛ մասնակիցներ,

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային, տնտեսական ապրանքների և տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/13» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

«Դավթյան Դիանա Արարատ» Ա/Ձ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում «ռուսերեն լեզվով անվանումը և կազմակերպաիրավական տեսակը» դաշտում նշված չէ կազմակերպաիրավական տեսակը (նշված է միայն մասնակցի ռուսերեն անվանումը):

«Դավիթ Հարությունյան Հարությունի» ԱՁ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ընդ որում, եթե մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը հաստատվում են լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ (լիազորագիր):

«Մարգարիտա Գալստյան» ԱՁ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես.

• դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում նշված չէ մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը և կազմակերպաիրավական տեսակը (նշված է մասնակցի հայերեն անվանումը և կազմակերպաիրավական տեսակը),

• առկա է անհամապատասխանություն դիմում-հայտարարության «Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, ղեկավարի անուն ազգանունը)» դաշտում նշված ազգանունների միջև,

- eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) չեն 4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի **հոկտեմբերի 29-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Հարգանքով,

ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/13» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան
Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788